Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» Կ-227-15.12.2017-ՊԻՄԻ-011/0, «Քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Կ-227[1]-15.12.2017-ՊԻՄԻ-011/0 և Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» Կ-227[2]-15.12.2017-ՊԻՄԻ-011/0 ՀՀ օրենքների նախագծերում կատարված փոփոխությունների և լրացումների վերաբերյալ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-227-15.12.2017-ՊԻՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ~~ՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-254-Ն օրենքի ~~(այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասից հանել «ֆինանսների նախարարության» բառերը, իսկ «9-րդ հոդվածի» բառերը փոխարինել «9-րդ եւ 14-րդ հոդվածների» բառերով:~~

~~***Հոդված 2.*** Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում՝~~

~~1) 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ .~~

~~«1) տեսչական մարմին՝ սույն օրենքի հիման վրա ստեղծվող վերահսկողություն եւ օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող պետական մարմին.».~~
~~2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 1.1-ին, 1.2-րդ եւ 1.3-րդ կետերով.~~

~~«1.1) լիազոր մարմին՝ տեսչական մարմնի վերահսկողության ոլորտի քաղաքականությունը մշակող գործադիր իշխանության համապատասխան մարմին.~~

~~1.2) տեսչական մարմնի վերահսկողության ոլորտ՝ օրենքով սահմանված ոլորտ կամ ոլորտի մաս, որի նկատմամբ տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ճանաչվում է վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին.~~

~~1.3) տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագիր՝ ընթացիկ տարում հաջորդ տարվա համար տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից հաստատվող փաստաթուղթ, որն առնվազն ներառում է տեսչական մարմնի վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները եւ~~

~~բացահայտված ռիսկերը, ինչպես նաեւ դրանց նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումների ժամանակացույցը»:~~

~~*Հոդված 3.* Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~*«Հոդված 5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ*~~

~~1. Տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է:~~

~~2. Տեսչական մարմինը ստեղծվում, վերակազմակերպվում եւ նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:~~

~~3. Տեսչական մարմինը կարող է ունենալ կառուցվածքային եւ տարածքային ստորաբաժանումներ: Տեսչական մարմնի ենթակայությանը կարող են հանձնվել պետական ոչ առեւտրային կազմակերպություններ:~~

~~4. Տեսչական մարմինն ունի ինքնուրույն հաշվեկշիռ: Տեսչական մարմնի գույքը ձեւավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ տեսչական մարմնի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից, ինչպես նաեւ օրենքով չարգելված այլ միջոցներից:~~

~~5. Տեսչական մարմնի լիազորությունների արդյունավետ իրականացման, նյութական խրախուսման, կարողությունների զարգացման նպատակով տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է բացել արտաբյուջետային միջոցների հաշիվ, որը չի կարող համալրվել տեսչական մարմնի վերահսկողության արդյունքում նշանակված տույժերով եւ/կամ տուգանքներով: Տեսչական մարմնի արտաբյուջետային միջոցների գոյացման աղբյուրները սահմանվում են առանձին օրենքներով:~~

~~6. Տեսչական մարմնի կանոնադրությունը եւ կառուցվածքը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~7. Տեսչական մարմնի գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, գնումների կազմակերպման (ֆինանսաբյուջետային), անձնակազմի կառավարման եւ կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաեւ տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված վարչական (կազմակերպչական) բնույթի գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը:~~

~~*Հոդված 4.* Օրենքի 6-րդ հոդվածի՝~~

~~1) վերնագիրը «մարմնի» բառից հետո լրացնել «նպատակը եւ» բառերով, իսկ 1-ին մասում «Տեսչական մարմնի լիազորություններն են՝» բառերը փոխարինել~~

~~«Տեսչական մարմնի նպատակն օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով իր վերահսկողության ոլորտում անվտանգության եւ (կամ) իրավական նորմերի պահանջների պահպանման ապահովումն է, որին համապատասխան տեսչական մարմինն իրականացնում է հետեւյալ լիազորությունները՝» բառերով.~~

~~2) 1-ին մասի 1-ին կետում «այլ» բառը փոխարինել «դրանց համապատասխան ընդունված նորմատիվ» բառերով, իսկ «կատարման» բառը փոխարինել «պահպանման» բառով:~~

~~***Հոդված 5.*** Օրենքի 7-րդ հոդվածում՝~~

~~1) 1-ին մասը 1-ին նախադասությունից առաջ լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.~~

~~«Տեսչական մարմնի կառավարմանը ներգրավված են նրա վերահսկողության ոլորտի լիազոր մարմնի (ների) ղեկավարը (ները)՝ կառավարման խորհրդի միջոցով:», իսկ հաջորդ նախադասության մեջ «ինն» բառը փոխարինել «տասն» բառով.~~

~~2) 2-րդ մասում՝~~

~~ա. հանել «կամ նրա որոշմամբ՝ համապատասխան տեղակալը» բառերը.~~

~~բ. «Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացուցիչը» բառերով.~~

~~3) 3-րդ մասում «մինչեւ երեք» բառերը փոխարինել «երկու» բառով.~~

~~4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին կետ.~~

~~«3.1 Խորհրդի կազմում անդամ ընտրված հասարակական կամ գիտական կազմակերպության ներկայացուցիչների անդամությունը խորհրդի առաջարկությամբ կարող է դադարել, երբ.~~

~~1) խորհրդի համապատասխան անդամը առնվազն երկու անգամ անընդմեջ չի մասնակցել խորհրդի հերթական նիստերին.~~

~~2) կասեցվել կամ դադարեցվել է համապատասխան հասարակական կամ գիտական կազմակերպության գործունեությունը.~~

~~3) համապատասխան հասարակական կամ գիտական կազմակերպությունը դադարել է համապատասխանել խորհրդի անդամ ընտրվելու չափանիշներին.~~

~~4) համապատասխան անդամը ներկայացրել է անդամությունից դուրս գալու մասին դիմում»:~~

~~5) 4-րդ մասում հանել «կամ նրա տեղակալը» եւ «կամ նրանց տեղակալները» բառերը:~~

~~6) 5-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«Խորհրդի նիստերը հրապարակային են եւ հրավիրվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ:»:~~

~~7) 7-րդ մասում՝~~

~~ա. լրացնել 1.1-ին կետ.~~

~~«1.1) հավանություն է տալիս տեսչական մարմնի կողմից ներկայացվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերին».~~

~~բ. 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝~~

~~«4) քննարկում է տեսչական մարմնի կողմից ներկայացվող տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը եւ հավանություն է տալիս դրան.»:~~

~~*Հոդված 6.* Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի՝~~

~~1) 2-րդ կետում «շրջանակները» բառից հետո լրացնել «՝ տարանջատելով վերահսկողական եւ վերլուծական, պլանավորման գործառույթները»~~

~~2) 3-րդ կետում «եւ լիազոր մարմնի ղեկավարի» բառերը փոխարինել «,Խորհրդի դրական եզրակացության դեպքում՝ համապատասխան բնագավառի քաղաքականությունը մշակող լիազոր մարմնի ղեկավարի կամ մեկից ավելի բնագավառների դեպքում՝ Խորհրդի նախագահի» բառերով.~~

~~3) 4-րդ կետում «լիազոր մարմնի ղեկավարի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի» բառերով.~~

~~4) 5-րդ կետում «լիազոր մարմնի ղեկավարի հաստատման է ներկայացնում» բառերը փոխարինել «հաստատում է» բառով.~~

~~5) 11-րդ կետում «հաստատմանն» բառը փոխարինել «հավանությանն» բառով:~~

~~*Հոդված 7.* Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասում «մաքսային» բառից հետո լրացնել «,ինչպես նաեւ գործադիր իշխանության համակարգում գործող ստուգում իրականացնող» բառերը:~~

~~*Հոդված 8.* Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝~~

~~1) առաջին նախադասությունը «հաշվետվությունները» բառից հետո լրացնել «առնվազն» բառով.~~

~~2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 1.1-ին կետով.~~

~~«1.1) գործունեության տարեկան ծրագրի կատարման ընթացքը»:~~

~~3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 8-րդ կետով.~~

~~«8) Տեսչական մարմնի եւ դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքների քանակը, բովանդակությունը եւ դրանց վերաբերյալ ընդունված որոշումները:»:~~

~~*Հոդված 9.* Օրենքի 18-րդ հոդվածում՝~~

~~1) «լիազոր մարմնի» բառերը եւ դրանց հոլովաձեւերը փոխարինել «ՀՀ կառավարության աշխատակազմի» բառերով եւ դրանց համապատասխան հոլովաձեւերով.~~

~~2) 2-րդ մասից հանել «(առանձնացված ստորաբաժանման)» բառերը~~

~~3) 3-րդ մասում «հաստատմանը» եւ «հաստատելուց» բառերը համապատասխանաբար փոխարինել «հավանությանը» եւ «հավանությունից» բառերով:~~

~~*Հոդված 10.* Օրենքի~~ 19-րդ հոդվածի~~ում՝~~

~~1) 1-ին մասում «երկու» բառը փոխարինել «չորս» բառով.~~

~~2)~~ 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Գործադիր իշխանության համակարգում գործող վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին իրականացվող լիազորությունների իրականացման նպատակով տեսչական մարմիններ կարող են ստեղծվել մինչեւ~~ 2018 թվականի հուլիսի 1-ը~~ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնը ստանձնելու օրը»:

~~3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին եւ 4.1-ին մասերով.~~

~~«3.1 Մինչեւ սույն օրենքի համաձայն տեսչական մարմինների ստեղծումը տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը քննում է նաեւ գործող տեսչությունների եւ(կամ) դրանց ծառայողների գործողությունների կամ անգործության (այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի) դեմ բերված բողոքները:~~

~~4.1 Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելն ստեղծված տեսչական մարմինների կարգավիճակը համապատասխանեցվում է սույն օրենքի պահանջներին»:~~

~~4) 7-րդ եւ 8-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:~~

Հոդված 11. Եզրափակիչ մաս~~ եւ անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից~~, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի, եւ 9-րդ հոդվածի 1-ին մասի, 11-րդ հոդվածով օրենքի 19-րդ հոդվածում լրացվող 4.1-ին մասի:~~

~~2. Սույն օրենքի 3-րդ հոդվածը, 9-րդ հոդվածի 1-ին մասը,հոդվածները, , 11-րդ հոդվածով օրենքի 19-րդ հոդվածում լրացվող 4.1-ին մասը ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 159-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվանից~~:

~~ՆԱԽԱԳԻԾ~~

~~Կ-227[1]-15.12.2017-ՊԻՄԻ-011/0~~

~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ~~

~~«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ~~

~~***Հոդված 1.*** Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«Տեսչական մարմնի հաստիքացուցակը հաստատում է տեսչական մարմնի ղեկավարը:»:~~

~~***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:~~

~~ՆԱԽԱԳԻԾ~~

~~Կ-227[2]-15.11.2017-ՊԻՄԻ-011/0~~

~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ~~

~~«ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ~~

~~***Հոդված 1.*** «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-247 օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.~~

~~«Տեսչական մարմինների պետական կառավարչական գործառույթների իրականացման առանձնահատկությունները սահմանվում են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով:»:~~

~~***Հոդված 2.*** Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:~~

~~***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 159-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվանից:~~